Հարգելի խմբագրություն

Հետևելով «Պատմա-բանասիրական հանդեսի» համարներին, ինչպես նաև հայագիտական այլ հրատարակությունների, հաճախ եմ հանդիպում այլազգի հայագետների անուններին։ Սակայն, ցավոք, նրանց մասին մեծ մասամբ հիշատակվում է ի միջի այլոց, տվյալ թեմայի հետ առնչվող նյութի կապակցությամբ։ Շատ ցանկալի էր իմանալ մանրամասնություններ նրանց կյանքի ու գործի վերաբերյալ (ապրած ժամանակը, միջավայրը, ի՞նչ պայմաններում և ի՞նչ մղումով են նրանք զբաղվել հայագիտությամբ)։ Եթե հնարավոր է, խնդրում եմ այսուհետև «Հանդեսիդ» էջերում պարբերաբար և ավելի հանգամանալից անդրադառնանք օտարազգի հայագետներին։

Ձեր հանդեսի ընթերցող՝ ՍԵՐԳԵՅ ՀԱԿՈԲՅԱՆ

Հարգելի ընկ. Հակոբյան,

«Պատմա-բանասիրական հանդեսը» տարիների ընթացքում, պատեհ առիթը ներկայանալիս, իր էջերը տրամադրել է ինչպես հայ, այնպես էլ այլազգի հայագետներին։ Հանգամանալից հոդվածներ են տպագրվել՝ Վլադ Բրնրցյանուի *(1960, № 3, էջ 233—237),* Չարլզ Դաուսերի *(1962, № 4, էջ 233—236),* Ֆրեդերիկ Ֆեյդիի *(1963, № 4, էջ 255—261),* Յոզեֆ Մարկվարտի *(1965, № 2, էջ 149—156),* Նիկողայոս Մառի *(1965, № 1, էջ 125—136),* Բրոսեի *(1967, № 1, էջ 198—212) և ուրիշների մասին։*

Այսուհետև ևս մեր հանդեսը կշարունակի տպագրել հոդվածներ հայագետների կյանքի ու գործունեության վերաբերյալ։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ